

Տեղեկանք փոփոխվող հոդվածների վերաբերյալ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2026 թվականի հունիսի 18-ին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ

Հոդված 162. Սնանկ ճանաչելու հարցի քննությունը եզրափակող դատական ակտի մասին իրավասու մարմիններին ծանուցումը

1. Սնանկ ճանաչելու մասին դիմումն առանց քննության թողնելու, գործի վարույթը կարճելու և սնանկ ճանաչելու մասին դիմումը մերժելու դատական ակտերն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից անհապաղ, սակայն ոչ ուշ, քան մեկօրյա ժամկետում, գրավոր, իսկ առկայության դեպքում՝ էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի գործադրմամբ ուղարկվում են այն մարմիններ, որոնք ծանուցվել են սնանկության դիմումը վարույթ ընդունելու մասին:

2. Պարտապանին սնանկ ճանաչելու վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից անհապաղ, սակայն ոչ ուշ, քան մեկօրյա ժամկետում, գրավոր, իսկ առկայության դեպքում էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի գործադրմամբ Սնանկության դատարանն ուղարկում է՝

- 1) պարտապանի պետական գրանցումն իրականացնող պետական մարմին.
- 2) անշարժ և պետական գրանցման (հաշվառման) ենթակա այլ գույքի (իրավունքների) պետական գրանցումն իրականացնող պետական մարմիններ.
- 3) հարկային մարմին.
- 4) մաքսային մարմիններ.
- 5) Կենտրոնական բանկ՝ իր կողմից կարգավորվող կամ վերահսկվող բոլոր անձանց ծանուցելու համար.

6) Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն.

7) Դատական դեպարտամենտ՝ Հայաստանի Հանրապետության բոլոր դատարաններին ծանուցելու համար.

8) պարտապանին լիցենզիա կամ ընդերքօգտագործման իրավունք տրամադրած պետական մարմին (մարմիններ), եթե գործում առկա է տեղեկատվություն լիցենզիա կամ ընդերքօգտագործման իրավունք ունենալու մասին.

9) աշխատանքի և սոցիալական հարցերով քարտեկեցության բնագավառի լիազոր պետական մարմին.

10) Մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության հանձնաժողով.

11) Գլխավոր դատախազություն.

12) ներքին գործերի նախարարություն.

13) Նոտարական պալատ՝ բոլոր նոտարներին ծանուցելու համար.

14) այն համայնքներ, որոնց տարածքում պարտապանն ունի գրանցված իրավունքներ:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված մարմինները պարտավոր են պարտապանին սնանկ ճանաչելու մասին տեղեկացումը ստանալուց հետո՝ 15-օրյա ժամկետում, Սնանկության դատարան ներկայացնել պարտապանի գույքի (այդ թվում՝ իրավաբանական անձանց բաժնեհավաք, փայտահավաք կամ այլ կապիտալում մասնակցության), ինչպես նաև իրավունքների (այդ թվում՝ պարտապանի գրավառուի իրավունքների) գրանցման մասին, իսկ բանկերը և Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիան՝ պարտապանի բանկային հաշիվների և դրանց մնացորդների, ինչպես նաև արժեթղթերի **նկատմամբ ունեցած իրավունքների մասին տեղեկություններ:**